



Տպագրված է Մխիթար Մեբաստացու անվան  
կրթօջախի տպարանում:



Ա շրայայալներն ,  
ագաղորներն ,  
ննջեցյալներն

ԵՐԵՎԱՆ - 1997

ՄԵՀՐՈՒԺԱՆ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

**ՎՇՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ,  
ՍԳԱՎՈՐՆԵՐԻՆ,  
ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻՆ**



ԵՐԵՎԱՆ - 1997

## ԽՈՍԻՔ ՆԱԽԱԲԱՆԻ

Վշտացած և սգավոր մարդկանց մխիթարության հարցը և ճնշեցյալների հանդեպ ունեցած քրիստոնավայել դիրքը, մեր կյանքի ամենաէական կողմերից մեկն է: Այդ պատճառով երբ սուրբ հայրերից մեկին հարցնում են, թե ո՞վ է իմաստուն, նա պատասխանում է, «Իմաստուն է այն մարդը, ով պատրաստվում է մահվան»:

Իսկ Հիսուս Քրիստոսը ասաց. «Ես իսկ եմ հարությունը և կյանքը. ով հավատում է Ինձ, թեպետ և մեռնի, կայրի՛. և ով կենդանի է ու հավատում է Ինձ, հավիտյան չի՛ մեռնի» [Հովհ. 11.25-26]:

Սքանչելի մի օրինակ կա «Մանապարհ երկնի» գրքույկի մեջ: Մի երկրում սովորություն կար, որ ամեն տարի իրենց թագավոր էին ընտրում ու երբ տարին լրանում էր, այդ թագավորին մերկացնում էին և ուղարկում մի անմարդաբնակ կղզի, որտեղ նա տառապելով մեռնում էր: Բայց ահա գտնվեց մի իմաստուն թագավոր, որը գահակալության ընթացքում իր ողջ ունեցվածքը փոխադրեց այդ կղզին: Եվ երբ լրացավ մեկ տարին ու նրան մերկացրին, որ ուղարկեն անմարդաբնակ կղզին, տեսան որ նա չսպիսականց ուրախ էր և չէր սգում իր մահը: Նրան հարցին, թե ո՞րն է դրա պատճառը, նա պատասխանեց ասելով. «Ես գիտեի որ իմ փառքը ժամանակավոր է այս երկրում և իմ բոլոր ունեցվածքը ընտանիքիս հետ միասին արդեն փոխադրել եմ այնտեղ, ու մի փառավոր պալատ եմ պատրաստել և այժմ ուրախ եմ այնտեղ մեկնելուս համար»:

Այդ՝ սիրելիներ, յուրաքանչյուր մարդ իր ունեցվածքի տերն է և կարող է այդ իմաստուն թագավորի նման ողորմության ճանապարհով բոլորը երկինք ուղարկել և չվախենալ մահվանից, այն դիտելով ոչ թե ամեն բանի ավարտ, այլ համարելով հավիտենական կյանքի սկիզբ:

Օրհնում եմ մեր սիրելի Մեհրուժանին ճիշտ ժամանակին գրված այս գրքույկի համար, որը վշտացյալների ու սգավորների մխիթարության սքանչելի խրատներ և օրինակներ ունի:

Թող օրհնված լինի մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից որպեսզի շատերի արթնության, դարձի և փրկության պատճառ լինի:

10 ապրիլի 1997թ.

Տեր Հարություն

Սբ. Էջմի՛ԱԾԻՆ

Սուրբ Գալանե վանքի քահանա

## Ն.Ն.ՋԵՑՅԱԼՆԵՐ ԹԵ՞ ՄԱՀԱՑԱԾՆԵՐ

Գրված է Սուրբ Գրքում, որ ամեն բան կարգով ու վայելչությամբ պետք է կատարել: Բայց հոգևոր տգիտության պատճառով մենք չենք կարողանում նույնիսկ ինչպես հարկն է մեր հարազատ ճնշեցյալներին թաղել: Ո՛ւմ ասես լսում ենք, ի՛նչ սնտոի բան ասես անում ենք, և արդյունքում էլի մնում ենք անմխիթար ու տխուր:

Այս փոքրիկ գրքույկով անճնար է շատ բան ասել այդ մասին, բայց ինչ որ հնարավոր է գրենք, որպեսզի գոնե ավելորդություններից խուսափենք, որ բեռնել ենք մեր վրա սնտոիապաշտության և աթեիստական դաստիարակության պատճառով:

Նախ, իմանանք ամենատաշիճն ու ամենակարևորը, որ ըստ Աստվածաշնչի, մարդկանց հոգիները անմահ են, և ապրում են մարմինների մեջ և երբ լրանում են մարդու կյանքի երկրային օրերը, հոգին դուրս է գալիս իր ժամանակավոր կացարանից՝ մարմնից ու տարվում է երկինք՝ Աստծո առջև:

Եթե ընթերցողը այս բոլորին չի հավատում, ապա այս գրվածները նրա համար չեն, քանզի խոսքը պետք է գնա ճնշեցյալների թաղման քրիստոնեական արարողակարգի մասին:

Մեր Հայ առաքելական եկեղեցին մահացածներին անվանում է ճնջեցյալներ, այսինքն հարության խորհուրդը կա թաքնված այդ բառի մեջ, քանզի ըստ Սուրբ Գրքի մարդիկ մի օր պետք է արթնանան մահվան քնից և կանգնեն իրենց Արարչի առջև, հաշիվ տալու երկրում ապրած իրենց կյանքի համար և ամեն մեկը ստանալու է իր վարձքը ըստ կատարած գործերի՝ թե՛ բարի, թե՛ չար:

Ահա այդ խոսքը հաստատող ավետարանական օրինակներից երկուսը:

Երբ Հիսուսին մի մարդ աղաչում էր որ իր տասներկու տարեկան միամորիկ հիվանդ դստերը բժշկի, այդ ժամանակ

տանհից մեկը եկավ ու նրան լուր բերեց, որ աղջիկը մեռավ: Բայց Հիսուսը հուսադրեց հորը ասելով. **«Մի՛ վախճեցիր, միայն հավատա՛ և նա կապրի»:**

Եվ Տերը գնալով նրա տուն, լացող ու ողբացող ժողովրդին տեսնելով ասաց. **«Լաց մի՛ եղևք, որովհետև մեռած չէ, այլ քնած է»:** Իսկ նրանք ծաղրում էին, որովհետև գիտեին որ մեռած է: Հիսուսը բոլորին դուրս հանելով, բացի ծնողներից ու երեք առաքյալներից, բռնեց աղջկա ձեռքից և ասաց. **«Աղջիկ, վե՛ր կաց»:** Եվ նրա հոգին վերադարձավ և իսկույն ոտքի կանգնեց [Դուկ.8.41-55]:

Երկրորդ համանման դրվագըը պատվում է Ղազարոսի հարության մասին, որը չորս օրվա մահացած լինելով, պատանվել և դրվել էր գերեզման: Հիսուսը նախապես գիտեցնալով այդ մասին, ասում է Իր աշակերտներին. **«Մեր բարեկամ Ղազարոսը քնեց, սակայն Ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»:**

Եվ գնալով գերեզմանը, ասաց որ քարը մի կողմ տանեն, և աղոթելուց հետո բարձրաձայն աղաղակեց, ասելով. **«Ղազարո՛ս, վե՛ր կաց, դու՛րս արի»:** Եվ մեռելը դուրս եկավ՝ ոտքերն ու ձեռքերը պատանքով կապած [Հովհ. 11.11-44]:

Այո՛, Աստծո տեսանկյունից բոլոր մահացածները ննջեցյալներ են, որոնք սպասում են հարության օրվա ազդարարության հրամանին, և մեր այժմյան ապրած կյանքից է կախված, թե ուր պետք է գնանք հարությունից հետո՝ դժոխքի կրակների մեջ տանջվելու՞, թե՞ երկնային թագավորության օրհնությունները վայելելու: Քանզի գրված է. **«Մարդկանց սահմանված է մեկ անգամ մեռնել, որից հետո՝ դատաստան»** [Եբր. 9.27]: Այս վերջին խոսքերը թող արթնացնեն որոշ ընթերցողների, որոնք օտար մոլորեցուցիչ գաղափարների խաբվելով կարծում են թե դեռ էլի բազմաթիվ ծնունդներ պիտի ունենան երկրի վրա, որով կարող են մաքրվել ու փրկվել մահից: Հիսուսը եկավ ու

մեզ ճշմարտությունը բերեց, ով հավատա՛ նրան՝ կփրկվի, ով չհավատա, Աստծո բարկությունն է մնալու նրա վրա:

Եվ այդ իմանալով սուրբ Եփրեմ Ասորին աղոթում է ասելով.

**«Հիշեցրո՛ւ, Տեր, իմ զբաղված և մոռացկոտ մտքին՝ Քո ահավոր և տակալի դատաստանը, արդարների պատիվն ու փառքը և մեղավորների աններելի տանջանքները և նրանցով զարհուրեցնելով, դողացրո՛ւ իմ մարմինը, որ իմ աչքերի առջև հանապազ տեսնեմ մահը»:**

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Իհարկե շատ բան չգիտենք անդրշիրիմյան հոգեվիճակների մասին, բայց ինչքան որ հայտնվել է մեզ Աստվածաշնչի և սուրբ հայրերի հայտնություններից, մի բան է պարզ, որ երկրային կյանքում մարդու ունեցած հավատն առ Աստված, հանձինս Հիսուս Քրիստոսի և մեր կատարած բարի գործերն ու ողորմությունները, ամենալավ վկաները պետք է լինեն անաչառ Դատաստանի ժամանանակ: Ինչը հաստատվում է Հակոբոս առաքյալի խոսքերով. **«Անողորմ է լինելու դատաստանը նրա հանդեպ, ով ողորմած չի եղել, քանզի ողորմությունը կպարծենա դատաստանի դիմաց»** [Հակոբոս 2.13]:

Իսկ եթե հանգուցյալը մինչև ննջելը տառապել է երկարատև կամ անբուժելի հիվանդությամբ, ապա համարենք, որ Աստված նրան ողորմություն է արել ու ժամանակ է տվել, որ այդ անձը քննի իր անցած կյանքը և ապաշխարի հոգու փրկության համար:

Իսկ ապաշխարություն նշանակում է կատարած մեղքերի ու հանցանքների զղջումով խոստովանություն, որից հետո ապրել բարի և քրիստոնավայել կյանքով:

Ասենք, որ Աստված Իր ծառաներին, այսինքն ձեռնադրված վարդապետներին ու քահանաներին իշխանություն է

տվել մարդկանցից խոստովանություն ընդունել և մեղքերի թողություն տալ, որը բխում է ավետարանական այն խոսքերից, երբ Հիսուսը ասաց Իր աշակերտներին. **«Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի՝ չի՛նք»** [Հովհ. 20.23]:

Այդ պատճառով հնում երբ մարդը անկողին է ընկել, ապա հարազատները իսկույն քահանա են հրավիրել նրա համար, քանզի հավատացել են, որ խոստովանված ու ներում ստացած մարդը ավելի շուտ կապաքինվի, իսկ եթե հիվանդությունը մահվան է տարել, ապա մխիթարվել են, որ Աստծո արքայությունը համար մաքրված ու պատրաստված է ննջել:

Բացի քահանա հրավիրելուց, հիվանդի հարազատները թող նրա համար Աստվածաշնչից սաղմոսներ կարդան, կամ Ավետարանից հատվածներ, ու երբեմն էլ սուրբ Պատարագի կամ այլ հոգևոր շարականների ձայնագրություններ միացնեն, որովհետև այդ բոլորը զորացնում է մարդու հոգին, որպեսզի կարողանա հաղթող դուրս գալ այդ պատերազմում, որը կոչվում է.

#### ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ՝

Լավ կլինի քանի դեռ ննջեցյալի գիտակցությունը տեղում է, կարողանա Ներսես Օնորհալու հետևալ աղոթքն անել.

«Բարերար Տեր, ինձ բարի հրեշտակի հանձնիր՝ իմ հոգին քաղցրությամբ ավանդելու համար և անխոյզ անցկացնելու դևերի չարիքից, որոնք երկնքի ներքո են. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս»:

Մեր սուրբ հայրապետի այս աղոթքը բոլոր մահկանացուների հիշեցնում է, որ մարդու հոգին մարմնից դուրս գալուց հետո, «չմեռավ ու պրծավ», ինչպես ոմանք են կարծում, այլ նոր է սկսվում հոգու համար վերջին պայքարը, քանզի երկնքի ներքո՝ օդի մեջ, չար դևեր են վխտում, որոնք ուզում են որսալ մար-

մնից դուրս եկած հոգին և իրենց հետ դժոխք իջեցնել, քանզի նրանք քաջ տեղյակ են մեր կատարած մեղքերին ու հանցանքների, որովհետև դրանց մեծ մասը իրագործվել են հենց իրենց դրդմով ու գայթակղություններով:

Այդ մասին սուրբ Մակար Մեծը այսպես է ասում. «Երբ մեղավոր հոգին մարմնից դուրս է գալիս, կատարվում է մի խորհուրդ. նրան են մոտենում դևերն ու զանազան չար գործություններ և այդ հոգին առևանգում տանում են իրենց մոտ: Եվ պետք չէ դրա համար զարմանալ, որովհետև եթե այդ մարդը դեռ ապրելով այս կյանքում, հանձնվելով դարձել է նրանց ստրուկը, առավել ևս մարմնից դուրս գալուց հետո նրանց կողմից կզերվի և կտանջվի»:

Իսկ եթե տվյալ հոգին աստվածահաճո կյանք է վարել, ապա Տիրոջ հրամանով նրան ուղեկցում է Աստծո հրեշտակը, որը պահպանում է մարմնից մերկացած ու անօգնական այդ հոգուն, մինչև որ կհասնեն երկնային կայանները:

Սուրբ վարդապետների կարծիքով և ըստ Գրիգոր Տաթևացու մեկնության, գոյություն ունեն երկու կայաններ՝ մեկը երկնքից վեր, մյուսը՝ երկնքի ներքո: Առաջինի մեջ ժողովված են նրանք, որոնք թողեցին ամեն ինչ և գնացին Քրիստոսի հետևից, իսկ երկրորդի մեջ հավաքված են նրանք, որոնք այդպես չեն վարվել ու մնացել են աշխարհի ցանկություններով ու կրքերով բռնված ու նրանք սպասելու են որ Դատաստանի ժամանակ ողորմությամբ փրկվեն: Այս երկու կայանները կոչվում են աջակողմյան խորան: Իսկ ձախակողմյան խորանը այն է, որտեղ հավաքում են չարերի ու անզիղջ մեղավորների հոգիները, որոնք Դատաստանով պիտի դատապարտվեն:

Այդ պատճառով սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացին ասում է. «Ինչպիսի ամ ու դողի մեջ է գտնվում մարդու հոգին, մինչև վերջնական դատավճիռը չի կայանում: Աստվածային գործության հրեշտակները կանգնում են պիղծ գործությունների դեմ ու

ներկայացնում են այդ հոգուն պատկանող բարի խոհերը, խոսքերն ու գործերը, իսկ նա սարսափելով ու դողալով իր համար վիճաբանող հրեշտակների ու դևերի միջև գտնվելով, սպասում է կամ իր ազատությանը, կամ կործանման դատապարտությանը»:

Եվ երբ անջեցյալ հարազատը վերջին անգամ փակում է աչքերը, ապա ճշմարիտ քրիստոնյան թող Սուրբ Հոգու մխիթարությամբ ընդունի այդ Աստծո ձեռքից և ավելորդ ողբ ու կոծ չանի, ինչպես հեթանոսներն ու անհավատներն են անում, որոնք հավիտենական կյանքի հույս չունեն, որովհետև Ադամի մեղանշելուց հետո ամբողջ մարդկության վրա աստվածային այս հրամանը կա. «*Հո'դ էիր, հո'դ էլ կդառնաս*» [Ծճնդոց 3.19]:

### ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՍ

Քանի դեռ Հիսուսը իր Խաչով չէր հաղթել մահին, Տիրոջ արդարները՝ հանձին Աստվածամոր մարգարեի, հույսով սպասում էին այդ օրվան ասելով. «*Մարմինս հույսով պիտի հանգստանա, քանի որ իմ անձս գերեզմանի մեջ պիտի չթողես*» [Սաղմոս 16. 9.10]: Իսկ այժմ Աստծո ծառայի՝ Պողոս առաքյալի այս հուսադրող խոսքերն ունենք.

*«Եթե հավատում ենք թե Հիսուսը մեռավ ու հարություն առավ, նույնպես էլ Աստված անջեցյալները Հիսուսով պիտի բերի իր հետ: Քանի որ սա եմ ասում ձեզ Տիրոջ խոսքով, եթե մենք մինչև Տիրոջ գալուստը ողջ մնանք, բնավ անջեցյալներից առաջ պիտի չանցնենք: Քանի որ Տերը Ինքը ազդարարության հրամանով, հրեշտակապետի ձայնով ու Աստծո փողով երկնքից պիտի իջնի ու Քրիստոսով մեռածները առաջ հարություն պիտի առնեն, հետո էլ մենք՝ որ ողջ ենք մնացել, նրանց հետ պիտի հափշտակվենք ամպերով Տիրոջ առջև ելնելու՝ օդի մեջ և այնպես հավիտյան Տիրոջ հետ*

*պիտի լինենք: Ուստի մեկը մյուսին մխիթարեք այս խոսքերով*» [Ա. Թեսաղ. 4. 13-17]:

Եվ վերջապես մեր Տիրոջ սուրբ շուրթերից ելած հետևալ խոստումն ունենք. «*Կգա՛ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Աստծո ձայնը և դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատապարտության հարության համար*» [Հովհ. 5.28]:

Իսկ թե ինչո՞ւ է մեկը շուտ հեռանում այս աշխարհից, իսկ մյուսը ուշ, դա մեր քննելիք բանը չէ, քանզի Աստծո գործերը անքննելի են: Նույնիսկ մի անգամ երբ սուրբ Անտոն անապատականը աղոթքով դիմեց Աստծուն, ասելով. «Տե՛ր, ինչո՞ւ ոմանք երիտասարդ են մահանում, իսկ ոմանք էլ ապրում մինչև խոր ծերություն»: Նրան Աստծուց հետևալ պատասխանը տրվեց. «Անտո՛ն, դու քեզ նայիր, իսկ դա Աստծուն է վերաբերվում, և քեզ օգուտ չէ դրանց քննելը»:

Խոսքը վերաբերվում է նաև նորածին մանուկներին, որոնք երկրի վրա շատ կարճ ժամանակ են ապրում: Մեր սուրբ հայրերը հավատքով ապավինելով Աստծո ողորմությանը, որ այդ մանուկ հոգիները նույնպես պետք է երկնքի արքայությունից անմասը չմնան, ծնունդից հետո ութերորդ օրը նորածիններին բերել են եկեղեցի և մկրտել են Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի Տիրոջ խոստացած հավիտենական կյանքի խորհուրդին նրանք էլ հաղորդ լինեն:

Եղել են նաև բազում դեպքեր, երբ ծնողները անհոգ են եղել այդ կարևոր հարցում և տարբեր առիթներով հետաձգել են մանուկի մկրտությունը ու երբ երեխան ծանր հիվանդացել է, նրանք անհույս տարել երեխային հանձնել են Տիրոջ ձեռքը, մկրտելով հոգու փրկության համար: Եվ մարդասեր Տերը այդպիսիներին ընդունելով իր Հայրական գիրկը, նրանցից շատերին առողջացնելով կյանք է շնորհել և երեխային լրիվ պաքին-

ված տուն են տարել:

Աստծո ողորմությունը այնքան մեծ է, որ նույնիսկ ըստ մեր եկեղեցու վարդապետների, նաև Պարտավի ժողովի 20-րդ կանոնի, ոչ միայն մկրտության ջերմ փափագ ունեցող չափահասներն են փրկվում, եթե ինչ-ինչ պատճառներով մինչ այդ մեռնում են, այլ նաև մանուկները՝ իրենց ծնողների անկեղծ ցանկության և դիտավորության շնորհիվ, եթե երեխան հանկարծամահ է աղել: Եվ այդպիսի մանուկների թաղման ժամանակ ծնողները պետք է քահանային հայտենեն իրենց սրտում եղած մկրտության դիտավորության մասին:

Իսկ այն չճանաչված մանուկները, որոնք տարբեր միջոցներով [աբորտ և այլն], իրենց ծնողների դաժանության հետևանքով դեռ արևի երես չտեսած հավիտենականության գիրկն են անցել, Աստծո ողորմությունից նույնպես բաժին կունենան, բայց և ահեղ դատաստանի ժամանակ նրանք կլինեն իրենց ծնողների անավոր վկաները, եթե այդպիսիները մինչ այդ գոյությունով չապաշխարեն իրենց կատարած այդ հանցանքի համար, որովհետև իրենց մեղավոր ցանկությունները բավարարելու համար մարդ էակի են զրկել ապրելու իրավունքից, քանզի մանուկը դեռ իր մոր որովայնում է հոգին ստանում:

#### ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԻՆ ԵՇԱՆՆԵՐԻՑ

Այս էլ իմանա՞նք, որ աշխարհի վերջում, ավետարանական մարգարեությունների համաձայն, մեղքի և անօրենությունների շատանալու պատճառով, մարդկանց վշտերն ու անբուժելի հիվանդությունները ավելի է տարածվելու, իսկ մահերը դառնալու են են անժամանակ, այսինքն դեռ ծերության չհասած:

Եվ այժմյան գերեզմանների շիրմաքարերի տարեվերջերի վկայությունները այդ են հաստատում, որ մենք հենց այդպիսի ժամանակներում ենք ապրում: Ուրեմն զգո՛ւյ՜ լինենք, քանի

դեռ ժամանակը մեր ձեռքում է, Սուրբ Հոգու գործությամբ ու Հիսուս Քրիստոսի անունով, մեղքի դեմ պատերազմենք բարի պատերազմը, որպեսզի մենք էլ պատրաստ լինենք Տիրոջ առջև անդատապարտության համար կանգնելու:

#### ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Քանի որ մարդկանց մահերը մեծ մասամբ ուղեկցվում են զանազան փորձություններով ու հիվանդություններով, դա ըստ եկեղեցու սուրբ հայրերի մեկնաբանվում է, որպես Աստծո վերջին այցելություն, որպեսզի տվյալ հոգին մաքրված, պատրաստված մտնի իր հավիտենական հանգիստը: Ինչպես և խրատում է մեզ Բարսեղ Մեծը ասելով. «Մարմինը վիրավորվում է որպեսզի բժշկվի հոգին, մեռցվում է մեղքը, որպեսզի ճշմարտությունը ապրի», և դարձյալ. «Ինչպես երկրի վրա ապրողին է անհնար խուսափել օդից, այդպես էլ այս աշխարհում ապրողին է անհնար, որ չփորձվի վշտերով ու հիվանդություններով»:

Այս առիթով այժմ կարդանք շատ օգտակար մի պատմություն, որ մեզ է հասել եկեղեցու հայրերի միջոցով.

«Մի անդամալուծ, որը տառապում էր մարմնի անտանելի ցավերից, լացով աղաչում էր Տիրոջը որ դադարեցնի իր տանջալից կյանքը: «Լա՛վ,- ասում է նրան հայտնված հրեշտակը, - Տերը քանի որ անպատմելիորեն բարի է, ողորմաժաբար կատարում է խնդրվածքդ. Նա դադարեցնում է քո ժամանակավոր կյանքը, բայց մի պայմանով, քո կյանքի մեկ տարվա տառապանքների փոխարեն, որ ամեն մարդու մաքրում է ինչպես ոսկին հալոցքում, համաձա՞յն ես արդյոք երեք ժամ մնալ դժոխքի տանջանքներում, քանզի քո կատարած մեղքերը պահանջում են, որ մաքրվես սեփական մարմնի տառապանքներով էլի մեկ տարի, որովհետև ինչպես քո, այդպես էլ բոլոր

հավատացյալների համար չկա ուրիշ ճանապարհ դեպի երկինք, բացի Խաչի ճանապարհի տառապանքներից, որ հարթել է Աստծո Միածինը: Այդ ճանապարհը քեզ ձանձրացրե՞լ է արդե՞ն՝ ուրեմն փորձիր թե ի՞նչ է ճշանակում դժոխքի տանջանքները, որտեղ ուղարկվում են բոլոր մեղավորները: Բայց ինչպես ասացի ընդամենը երեք ժամով, որից հետո սուրբ Եկեղեցու աղոթքներով կազատվես այնտեղից»:

Տառապյալ անդամալույծը մտածեց՝ ևս մեկ տարվա տառապանքը դա ահավոր երկար է, ավելի լավ է ես երեք ժամ համբերեմ դժոխքում, քան մի ամբողջ տարի երկրի վրա և ասաց հրեշտակին. «Համաձայն եմ դժոխքի փորձությանը»: Եվ հրեշտակը զգուշությամբ գատեց անդամալույծի հոգին նրա տառապյալ մարմնից ու տարավ թողեց դժոխքում, ասելով. «Երեք ժամից հետո կգա՛մ քո հետևից»:

Ամենուրեք տիրող խավարը, անդությունները, մեղապարտների աղիողորմ ճիչերը, չար դևերի զագրելի կերպարանքները շատ սարսափեցրին տառապյալին, քանզի այնտեղ՝ դժոխքի խավարի անդունդի վրա թռչող կալծակնացալտ աչքերով դևերն ու տանջվողների ահաստուտ ողբերը նրա համար խիստ անտանելի եղավ ու վախից դողալով ամբողջ ուժով օգնություն կանչեց, բայց նրա ձայնը միայն թույլ ու հեռավոր արձագանք տվեց մահվան անդունդի խորխորատներում:

Նրան ամեն մի բռնեմ տարի էր թվում և վարկյան առ վարկյան սպասում էր լուստ հրեշտակին, որ իր խոստման համաձայն երեք ժամից պիտի իրեն հաներ այդտեղից:

Բայց նա ուշանում էր, իսկ տառապյալի աչքի առջև դևերը ծաղրելով տանջում էին ծարավ ու անօգնական մեղավորներին, դրանով ավելի խորացնում նրանց տառապանքները:

Անհուսությունից բղավում, լացում ու ատամներն էր կրճտացնում անդամալույծը, մտածելով որ իրեն մոռացել են

ու հավիտյան պիտի այնտեղ տառապի մյուսների հետ:

Վերջապես լուստ հրեշտակը դրախտային ժպիտով հայտնվեց, ասելով. «Դե՛, ինչպե՞ս ես եղբայր»: Իսկ պատասխանի փոխարեն հազիվ շարժվող, կարկամած շուրթերով անդամալույծը շջնջաց. «Ես չգիտեի, որ հրեշտակի բերանով էլ է սուտ հնչում»: «Ի՞նչ սուտ, ինչի՞ մասին է խոսքը»,- հակաճառեց հրեշտակը: «Ինչպե՞ս թե ինչ սուտի մասին, - արտաբերեց տառապյալը, - դու խոստացար այստեղից երեք ժամից հանել, բայց ամբողջ մի դար թողեցիր ինձ դժոխքում»: «Ների՛ր, բայց ի՞նչ դարի մասին է խոսքը, երբ ընդամենը մեկ ժամ է անցել, իմ բացակայությունից հետո, - պատասխանեց հրեշտակը, - և ըստ մեր պայմանի դեռ երկու ժամ էլ պետք է մնաս այստեղ»:

«Եվս երկո՞ւ ժա՛մ,- սարսափից գոչեց անդամալույծը, -օ՛հ ոչ, այլևս չեմ կարող դիմանալ, այլևս ուժ չունեմ, եթե Տիրոջ կամքն է, թող թույլ տա, ինձ հանես այստեղից: Ավելի լավ է երկրի վրա տարիներով, դարերով տանջվեմ, թեկուզ մինչև Տիրոջ գալուստը, բայց ոչ այստեղ: Խղճա՛ ինձ, տա՛ր, տա՛ր այստեղից»: Լուստ հրեշտակը մեկնելով ձեռքը, հանեց նրան խավարի անդունդից, ասելով. «Ասոված, ինչպես ողորմած ու մխիթարիչ Հայր Իր շնորհն է ուղարկում քեզ, բայց պետք է կյանքիդ մնացած օրերում հիշես, թե ի՞նչ ահավոր են մեղավորների հավիտենական տանջանքները»:

Այս փոքրիկ պատմությունը թող բոլորիս արթնացնի մեղքի թմբիրից և այս կյանքի ժամանակավոր դժվարությունները, զանազան մեղություններն ու հիվանդությունները թող չնկճեն մեզ, այլ հիշելով դժոխքի ահավոր տանջանքները, իմաստությամբ անցկացնենք մեր կյանքի մնացած օրերը, ու գոհություն տանք Աստծուն ամեն բանի համար և ահով, դողով մեր հոգիների փրկությունը գործենք:

Այդ պատճառով Եփրեմ Ասորի սուրբ հայրը աղոթում է այսպես.



«Տե՛ր, վախճանիս օրը բարի հրեշտակ առաքիր ինձ և օգնի՛ր քաղցրությամբ ավանդել իմ հոգին, առաջնորդի՛ր ուղիղ ճանապարհով և կործանի՛ր դարանակալ գազանին, անխոտվ անցկացրու խավարային օդի միջով և ազատի՛ր գազանի չար ծանիքներից, փրկի՛ր և աներկյո՛ւղ պահիր և բնակեցրո՛ւ սուրբերեւորիդ կայանում՝ սպասելու և ակնկալելու Քո մեծ Գալստյանը»:

Իսկ այդ առիթով սուրբ Թովմաս Աքվիմացին խրատում է. «Որպեսզի մենք իրապես դժոխք չնկնենք, հարկ է, որ երբեմն երբեմն մտքով այնտեղ լինենք», և դարձյալ. «Դժոխքի կրակների հետ համեմատած, երկրային հրդեհները զովացուցիչ ցողեր են»:

## ՉՈՐՍ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս էլ իմանանք, որ մահվանից առաջ մարդ արարածը կրում է իր կյանքի վերջին և ամենամեծ փորձությունները, քանի որ մեր հոգիների ոլերիմ թշնամի՛ն՝ սատանան, տեսնելով մարմնից անջատվելու մոտալուտ պահը և անում է ամեն բան, որպեսզի այդ հոգին իր հետ դժոխք իջեցնի: Սա մանավանդ վերաբերվում է քրիստոնեավայել ու բարեպաշտ կյանք վարած մարդկանց, քանզի այդպիսիները իրենց աղոթքներով ու սրբակենցաղ կյանքով քիչ հոգս չեն պատճառել չար գորություններին: Բայց այդ ժամանակ մարդասեր Աստված նույնպես անում է ամեն ինչ, որպեսզի փրկի մարդու հոգին:

Ահա այդպիսիների համար, ըստ եկեղեցու սուրբ հայրերի, հավիտենական կյանքի շեմին, հետևալ չորս փորձություններն են սպասվում.

1. **Հավատքի սասանում**, որի ժամանակ սատանան անհավատության մտքեր է սերմանում, կամ էլ հայտնի երևալով հավատքիդ դեմ է խոսում: Դրա դեմ քրիստոնյան պետք է պատասխանի այսպես.

«Հետի՛ս գնա սատանա՛ որ ստության հայրն ես, ես չեմ ուզում քեզ լսել: Ամբողջ հոգով հավատացել եմ ու հավատում եմ նրան՝ ինչին հավատում է իմ մայրը՝ սուրբ Եկեղեցին», և մի թույլ տուր անհավատության մտածմունքները մինչև փրտող հասնեն:

Եվ համոզված եղիր որ քո վերջին ժամին չարը ուզում է քեզ սասանել փրկությանդ վեմից: Այս փորձության ժամանակ ամենակարևոր գենքը սատանայի հետ երկխոսության մեջ չմտնելն է, այլ անդադար Հիսուսի անունը կանչելն ու Նրա օգնությունը խնդրելն է, որը շատ մոտ է իր զավակների վերջին փորձության ժամանակ:

2. **Հուսահատություն**, -կայանում է նրանում, որ սատանան հիշեցնում է կատարածդ բազմաթիվ մեղքերը, ինչի պատճառով անհուսության վախն է պատում քեզ, կտրելով փրկության հույսդ, որ ունեիր մինչ այդ փորձությունը: Բայց դու ո՛վ մարդ, հավատքով ավելի՛ փարվիր Քրիստոսի փրկարար Խաչին, որի վրա թափված արյունով մեղքերի թողություն ու քավություն ունեն բոլոր նրանք, ովքեր զղջացել ու խոստովանել են իրենց մեղքերը, և Հովհաննես առաքյալի հետևալ խոսքերը հենց այդ է հաստատում. **«Եթե ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ: Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է Նա [ԱՍՏՎԱԾ] և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու ամեն անհրաժեշտությունից»** և դարձյալ. **«Նրա Որդու Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից»:** [Ա. Հովհ. 1.7-9]

Թող նման փորձության մեջ ընկնողը լավ հիշի, որ Տերը խոստացել է ներել զղջումով խոստովանած ամեն մեղք, ինչպիսին էլ որ ուզում է լինի այն: Քանի որ սատանան հաճախ մարդկանց հիշեցնում է իրենց գործած խիստ զազրելի ու ծածուկ մեղքերը և փսփսում մեր ականջին, ասելով. այդ մեղքերը այնքան ահավոր են, որ դժվար թե Աստված դրանք ների: Բայց թող Տիրոջ հուսադրող խոսքերը մեզ զորացնի հավատքի մեջ, որ-

պէսզի այս փորձություննից հաղթանակով դուրս գանք ամենքս:

3. **Փառասիրություն**, - այսինքն չարը համոզում է քեզ, որ պէսզի դու փրկության հույսդ դնես ոչ թե Աստծո ողորմությանն ու ամենակարողության վրա, այլ քո կատարած բարի գործերի, դրանով իսկ նսեմացնելով Աստծո Որդու չարչարանքները մեր փրկության համար: Բայց դու թեկուզ և սրբերին հավասար գործեր էլ արած լինես, հիշի՛ր որ միևնույնն է, առանց Աստծո քավչարար արյան գործության, որ թափվեց Խաչի վրա, ու Նրա ողորմության, ոչ ոք չի կարող արդարանալ Տիրոջ առջև: Իսկ եթե չարը հիշեցնի էլ կատարածդ բարի գործերը, մտածիր, որ այդ բոլորը կատարվել են Աստծո օգնությամբ ու Նրա գործությամբ, բայց ընդամենը քո միջոցով: Դրա համար Նեղոս Սինալեցի սուրբ հայրը խրատում է ասելով. «Եթե բարություն ես կատարել ուրախացի՛ր, բայց մի՛ մեծամտածիր, քանի դեռ փրկության նավահանգիստը չես հասել»:

Այդ փորձությունը կանխատեսելով Հիսուսը իր աշակետներին զգուշացրեց ասելով. **«Երբ կատարեք այդ բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե՛ մենք անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտավոր էինք անել, ա՛յն արեցինք»** [Ղուկաս 17.10]:

4. **Տեսիլքներ**, - որի ժամանակ դիվական գործությունները ուրվականների, կամ լուսո հրեշտակի կերպարանքներով, երևում են մեռնողի աչքին, որպէսզի, կամ վախեցնեն նրան, կամ էլ մոլորեցնեն: Բայց դու թեկուզ և իսկական հրեշտակ էլ տեսնես, մի՛ ընդունիր, բայց մի՛ էլ մերժիր, այլ քեզ անարժան համարիք նման բաներ տեսնելու, ու մի՛ վախեցիր թե դրանով կարող ես Աստծուն վիրավորել, որովհետև Տիրոջը հաճելի է խոնարհ ու միշտ մեզ անարժան համարող դիրքում տեսնել, քանզի Նա խոնարհներին շնորհ է տալիս:

Բայց ավելի լավ է մինչև մահվան շեմին հասնելը, Տիրոջ գործությամբ ու Նրա օգնությամբ պատերազմենք մեր մեղա-

վոր ցանկությունների դեմ, որպէսզի ապաշխարելով ու մաքրվելով դրանցից, կարողանանք հաղթությամբ ավարտել մեր հավատքի ընթացքը ու խոստացված երկնային պսակին արժանալ:

Իսկ սուրբ Գրիգոր Տաթևացին այս մասին հորդորում է, ասելով.

«Մենք պարտավոր ենք այստեղ ուտել խմել մեր ապաշխարությունը, քանզի բազում պահք ու տանջանք կա մահվանից հետո և ինչպես նավորդներն են իրենց կերակուրը պատրաստում նամփոքությունից առաջ, մենք էլ մեր հոգևոր կերակուրը պետք է պատրաստենք այստեղ, որպէսզի մարմնից դուրս գալուց ու մահվան ծովը մտնելուց, սովամահ չկորչե՞նք», որ ի նկատի ունի Աստծո անաչառ Դատաստանը:

Եվ թող մեր ունեցվածքն ու առողջությունը մեզ անհոգության չմատնեն, ինչպես ավետարանական մեծատան հարուստին, որը միայն ուտելու խմելու և հագնվելու հետևից լինելով, երբ հանկարծ հոգին պահանջվեց իրենից, դժոխքում անգամ մի կաթիլ ջրի չարժանացավ:

Ու այս հոգևոր պատերազմում չնկնվենք զանազան փորձություններից, այլ միշտ հիշենք Հիսուս Քրիստոսի մխիթարիչ խոսքերը, որ ասաց երկինք համբարձվելուց առաջ. **«Ահա ամեն օր ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վերջը»** [Մաթ. 28.20]:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԵՐՁՑԱԼ ԿՅԱՆՔԻ

Իսկ այժմ մի քանի խոսքով գրենք թե ինչ պետք է անել, երբ մարդն արդեն ավանդել է հոգին:

Առաջին հերթին նմեջնային տեսնագրում են՝ այսինքն խաչակնքում, որպէսզի մեր խաչյալ Տիրոջ բաժինը դառնա և փակում աչքերը, հետո երեսը շրջում դեպի երկինք՝ այսինքն

ուղղում դեպի երկնային Երուսաղեմ, իսկ ձեռքերը խաչաձև դնում սրտին, ինչպես որ նա խոնարհաբար պիտի կանգնի Տիրոջ առջև: Որից հետո անհրաժեշտ է լողացնել և հագցնել իր սիրած հագուստները [և անպայման չէ բոլորովին նորը], նախապես մարմինն ու դագաղը ցողելով սուրբ ջրով, որը կարելի է խնդրել եկեղեցուց, և խնկարկել: Իսկ դագաղը պետք է դնել այնպես, որպեսզի մեջքը գլուխը դեպի արևելք ուղղված լինի, որովհետև Աստծո եկեղեցիների բոլոր խորանները դեպի արևելք են ուղղված, քանզի ըստ Տիրոջ Խոսքի Հիսուսի երկրորդ գալուստը արևելքից է լինելու:

Պետք է նաև մեջքը գլխավերևում երկու մոմակալներով վառվող մոմեր դնել, որոնք ըստ Ավետարանի խորհրդանշում են Տիրոջ հարությունը, երբ լույսաբեր կանաչ խաչելության երրորդ օրը Հիսուսի գերեզմանը զնայով այն դատարկ գտան, իսկ գլխավերևում երկու ճերմակ հագուստով հրեշտակներ էին նստած, որոնք ստաջիմը ավետեցին Հիսուսի հարության մասին:

Մոմերը հիշեցնում են նաև մարդու կյանքը՝ մի օր ծնվեց, մի օր մեռավ, և այդ մոմի նման կյանքը կարճ ժամանակ լուսավորվելով, շուտով մարեց:

Հնում, երբ ամեն գյուղ իր եկեղեցին ուներ, մեջքը գլխին առաջին զիջերը տանում էին ու թողնում այնտեղ, որ եկեղեցու սպասավորները աղոթեն նրա հոգու փրկության համար: Այդ արարողությունը կոչվում էր «ամբիծք», այսինքն մեջքը գլխին հոգու մաքրության արարողություն:

Ծատ կարևոր է նաև մինչև թաղումը մեջքը գլխին համար սաղմոսներ կարդալ ու երբեմն-երբեմն նրա անունը տալով ասել. **«Հիշի՛ր Տեր, երբ գաս Քո արքայությունով»**, որովհետև հոգին մարմնից զատվելուց հետո, ինքը այլևս իր համար չի կարող աղոթել, այլ պետք է այդ անուն նրա հարազատները, ծանոթներն ու քահանայները:

Այս միտքը հաստատում է նաև Հովհաննես Դամասկացին, ասելով.

«Յուրաքանչյուր մարդ, որը իր մեջ ունեցել է առաքինության թեկուզ մի չնչին թոխմոր, բայց հակառակ իր ցանկությանը չի կարողացել այն վերածել հացի, ծուլության, անհոգության, կամ էլ այսօր վաղը գցելով, վախճանից հետո չի մոռացվի արդար Դատավորի կողմից, այլ նրա հարազատներին, մոտիկներին և ընկերներին կհորդորի ու նրանց մտքերը կուղղի որպեսզի օգնեն նրան»:

Իսկ Գրիգոր Տաթևացին դրա վերաբերյալ գրում է. «Պետք է աղոթքով խնդրել հավատացյալ մեջքը գլխին համար, քանզի եթե աղքատներն ու չքավորները կարոտ են ողորմության, առավել ևս նրանք, ովքեր գրկվել են բոլոր բարիքներից ու հայտնվել անճարության մեջ: Եվ եթե հաշմանդամներին ենք ողորմություն անում, որքա՛ն առավել պետք է նրանց ողորմել, որոնց ողջ մարմինն է ապակամվել ու տարածվել հողի մեջ: Եվ եթե մարդկանց ձեռքը գերի ընկածներին ենք ողորմում, որքա՛ն առավել պետք է նրանց ողորմել, ովքեր մեղքերի պատճառով մատնվել են սատանային: Եվ քանի որ նրանք չեն կարող ապաշխարել մեղքերի համար, և մեռյալները չեն կարող օգնել մեռյալներին ու տալ խնդրածը [ինչպես Աբրահամը հարուստին մի կաթիլ ջուր իսկ չտվեց. տես Դուկ. 16.19], ուստի միայն մարդասեր և գթած Աստծո ողորմությանն են ակնկալում և կարոտում ողջերի աղոթքներին, ինչպես երանելի Հոբն է ասում նրանց անունից. **«Ողորմե՛ք, ողորմե՛ք ինձ, բարեկամներ, քանզի Տիրոջ ձեռքը դիպավ ինձ»** [Հոբ 19.21]:

Հետևաբար մենք պետք է ողորմենք և աղոթենք նրանց համար, ովքեր հույսով ու հավատով մեջքը գլխին ի Գրիստոս, և աշխարհի սխալանքներից ինչ-ինչ բաներ մնացին նրանց մոտ. նաև նրանց համար պետք է մեղքերի թողություն խնդրել, ովքեր հանկարծակի մեռնելով. [պատերազմում, գազան-

ներից, հեղեղից, հողմից, կալծակից, հիվանդությունից, կամ այլ պատահարներից], չկարողացան խոստովանել իրենց մեղքերը և սուրբ պատկերները արժանանալ:

Եվ այսպես սուրբերին ու արդարներին պետք է հիշել որպես բարեխոսներ, իսկ մեղավորներին՝ նրանց համար ներում խնդրելով: Եվ առհասարակ պետք է հիշել բոլորին՝ թե ծանոթներից, թե անծանոթներից, թե մեր խնամքին հանձնված երախտավորներին՝ թե սուրբ պատարագի ընթացքում, թե ամենօրյա աղոթքներում» [Գ. Տաթևացի. Ձմռան հատոր]:

### ՀՈԳՈՒ ԺԱՄՍ,ՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվ լրացնենք, որ ըստ սուրբ հայրերի բացատրության, մարդու մահամալուց հետո հոգին դեռ երեք օր երկրի վրա է լինում և իր պահապան հրեշտակի ուղեկցությամբ իրավունք ունի գնալու ուր որ ուզում է, և բնական է որ այն մեծ մասամբ նա կլիմի այնտեղ, որտեղ իր մարմինն ու իր հարազատներն են և որտեղ բարի գործեր է կատարվել:

Իսկ երրորդ օրը, որը խորհրդանշում է նաև Հիսուսի գերեզմանում մնալու երեք օրերը և հոգու փրկության երեք աստիճանները՝ այսինքն զոջում, խոստովանություն և ապաշխարություն, որոնք լինում են մտքով, խոսքով և գործով, մեջեջյալի հոգին երկինք է տարվում, ու երանի այն հոգիներին ովքեր արդարների օթևանում կսպասեն մինչև ահեղ Դատաստանի օրը:

Այդ պատճառով Ներսես Ծնորհալիս այսպես է աղոթում.

Լույս ճշմարիտ Քրիստոս, արժանավորի՛ր իմ հոգուն կոչման օրը ուրախությամբ տեսնել Քո փառքի լույսը և բարիքների հույսով հանգչել արդարների օթևաններում, մինչև Քո գալստյան մեծ օրը, և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Երբեմն հարց են տալիս մարդիկ, թե արդյո՞ք մեջեջյալները իրար տեսնում և ճանաչում են անդրշիրիմյան աշխարհում: Ավետարանական վկայությունները ասում են, որ այո՛, ինչպես մեծատան հարուստը տեսավ և ճանաչեց հայր Աբրահամին ու աղքատ Ղազարոսին և խոսելով նրանց հետ մի կաթիլ ջուր խնդրեց:

Նաև հարց են տալիս, թե հոգիները մեջեջուց հետո երևո՞ւմ են մարդկանց թե ոչ: Այդ հարցին Ներսես Մեծը պատասխանում է, որ այո՛ Տիրոջ սրբերը պահապան հրեշտակի միջոցով երևում են մարդկանց, թե երազներով, թե արթուն և օգնում են մեզ, խոսում մեզ հետ և աղոթում մեզ համար: Իսկ չար ու մեղավոր հոգիներին իրավունք չի տրված հարաբերվել մարդկանց հետ, որովհետև նրանք արգելափակված են մինչև դատաստանի օրը:

Եվ սա ապացույց է այն դիվական մոլորության դեմ, որ այժմ տարածված է մեր ազգի մեջ, մանավանդ երիտասարդների շրջապատում, երբ նրանք ոգեկանչության «սեաններ» են կազմակերպում, իբրև թե մեջեջյալների հոգիների հետ են հարաբերվում և ինչ որ իրենց հետաքրքրող հարցեր են տալիս ու պատասխաններ ստանում: Մինչդեռ այդպիսիները չգիտեն, որ այդ պահին իրենք հարաբերվում են դևերի ու չար ոգիների հետ, որոնք ասիսեի շարժումով կապի մեջ են մտնում մասնակիցների հետ ու նրանց գցում իրենց ծուղակը, իսկ առավել անզգույշ ու մոլորված զոհերին, երբեմն նույնիսկ մինչև ինքնասպանության հասցնում:

Իսկ հանգուցյալի հոգու համար անհրաժեշտ է, որպեսզի բուն հուղարկավորությունը Տիրոջ օձյալ քահանան կատարի, ըստ եկեղեցական ընդունված ծիսակարգի, որովհետև այնտեղ կան բազմաթիվ բարեխոսական աղոթքներ և ավետարանական ընթերցանություններ, որոնք օգտակար են, թե մեջեջյալի հոգու և թե նրա հարազատների համար: Ահա դրանցից մի քանիսը.

❖ *Աղաչենք որ Տեր Աստվածը այս հանգուցյալի հոգին ընդունի, արդարների օթևանում:*

❖ *Աղաչենք որ Տերը ների նրա կամավոր և ակամա մեղքերը:*

❖ *Աղաչենք որ Տերը այս անջեցյալին արժանի անի խաղաղությամբ և մեծ հույսով սպասելու մինչև այն օրը, երբ ազարարության փողը Տիրոջ գալուստը պիտի ավետի:*

❖ *Աղաչենք Տիրոջը, որ նա լսի երանավետ կոչը. «Ո՛վ Հորս օրհնածներ, եկեք ձեր հանգստավայրը»:*

❖ *Աղաչենք, որ Տերը նրան երկնային կյանքի և անմահության պասկը պարգևի:*

Իսկ թաղման ավարտին ասվում է.

❖ *Աղաչենք, որ Տերը Իր Խաչի նշանով կնքի այս գերեզմանը, մինչև Իր սուրբ Գալուստը:*

❖ *Աղաչենք, որ Տերը Սուրբ Հոգու շնորհով լցնի Իրեն լսող և Իր անվանը հավատացող սրտերը:*

❖ *Աղաչենք որ Տերը Իր ողորմությամբ մխիթարի սգավորների սրտերը:*

❖ *Տե՛ր ողորմյա՛, Տե՛ր ողորմյա՛, Տե՛ր ողորմյա՛:*

*Եվ մնան շատ սիրտ հուսադրող ու մխիթարիչ աղոթքներ:*

### **ՍՆՈՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ըստ մեր ժողովրդի սնոտի և անհիմն սովորության, երբեմն անջեցյալի հետ, նույն շիրմափոսում դնում են նրա հագած հագուստներից, կամ զանազան իրերից, որը անմտություն է, քանզի մերկ եկել ենք այս աշխարհ մերկ էլ գնալու էնք, և ավելի լավ է այդ հագուստները բաժանել կարիքավոր աղքատներին ու մերկերին, որոնց օրհնանքը ասացինք այդքան անհրաժեշտ է անջեցյալի հոգուն: Էլ չեմ ասում սնոտապաշտական այն արարողությունները, ինչպիսիք են դագաղի կողով դրամ շեմին երեք անգամ հարվածելը կամ երեք անգամ շքամուտքի

առջև հանգուցյալին պտտեցնելը, և այլ անխորհուրդ սովորություններ, որոնք լինելով ժողովրդական՝ ազգային, երբեմն էլ պարզապես ինքնահնար, ոչ մի կապ չունեն քրիստոնեական ճշմարտության հետ:

Այդ սովորությունները երբեմն ոչ միայն սնոտի են, այլև դիվական ու վնասակար: Օրինակ ազգագրական փաստացի տեղեկություններ կան, թե ինչպես այս դարասկզբին Հայաստանի որոշ գյուղերում, եթե մի հանգուցյալ երևում է մի քանի հիվանդների ու նրանք մեռնում են, ապա բարեկամները հանում են հանգուցյալի դիակը և գյուղի յուրաքանչյուր տնից մի-մի փայտ են բերում և դիզում գերեզմանի մոտ և վառելով այն դիակը դնում են կրակի վրա, մինչև մոխրանա և մոխիրը թափում են հետ՝ գերեզմանը:

Կամ էլ եղել է հետևալ սովորությունը, որ նոր մեռածի մայրը շաբաթ օրերը մինչև աստղերի երևալը ջուր չի խմել, որովհետև իբր այդ ժամանակ հոգիներին տանում են ջուր խմեցնելու և ում մայրը ջուր է խմել, նրան չէն տանում, ասելով. «Բո բաժինը մայրդ խմեց»: Այդ օրերին մայրը գլուխը չի լվացել, որպեսզի նրա որդիները սապնաջուր չխմեն այնտեղ:

Իսկ ինչ ասենք այս սովորությանը, երբ հանգուցյալ երիտասարդների աչքերը թաղելիս չեն փակել, որպեսզի հողի հետ հարաբերվելով «աչքը կշտանա այս աշխարհից», և մինչ թաղելը դիակի, երեսին մաղ են դրել, որ «Էս փուչ աշխարհից կշտացած գնա»: Իսկ մեծահասակ ծերունու կրծքում գուլպա գործելու մի շյուղ են ցցել, մեկն էլ դրել դագաղում, ասելով. «Գնա՛, քո աչքը քեզ վրա լինի, մեր վրա աչք չունենա՛ս»: Եվ եթե մեկը պանդխտության մեջ է մեռել, օտար հողում, ապա այդպիսիներին իր տունը չեն տարել, այլ դաշտում դնելով, այնտեղ են հավաքվել սգավորները, ու եկեղեցի տանելուց հետո տարել են թաղելու: Եվ մնան շատ ու սնոտի անհիմն ժողովրդական հավատալիքներ, որոնք առաջացել են մերձակա

հեթանոս ու ոչ քրիստոնյա ազգերի հետ շփվելիս, հավատարիմ չմնալով մեր լույս քրիստոնեական սուրբ գրային խոսքին:

Իսկ վերջին տարիների ժամանակակից սովորություններից է դարձել հանգուցյալի թաղման շքեղությունը ապահովելու համար օգտագործել թանկարժեք ծաղկեպսակներ, ծոպավոր ծածկոցներ, կամ էլ թարմ ծաղիկներ նետել հողարկավորողների ոտքերի տակ կոխկրտվելու, [մինչդեռ գիտենք, որ ծաղիկները հարգանքի և սիրո նշան է], իսկ մոտակա փողոցի մայթերը զարդարում են սև ժապավեններով հյուսված ծաղիկներով, կամ էլ ի ցույց բոլորի մեծ ու սև պաստառի վրա գրում են անցեցյալի անունն ու տարիքը:

Այդ բոլորը ըստ իս ավելորդություններ են, և մանավանդ ամենամտթափի ու տգեղ երևույթներից է, երբ հողարկավորության շքերթը փողոցներով անցնելիս մեքենաների շչակներով և ձայնային ազդանշաններով վայրենի աղմուկ են բարձրացնում, որը ընդամենը մարդկանց աչքին ավելի բարձր երևալու համար է, որ տեսնողները չասեն թե...

Ա՛յո, մենք հաճախ մտածում ենք ինչպես մարդկանց հաճույքները, մինչդեռ քիչ ենք ջանում մեր Աստծու կամքը կատարել, ու հիշենք, որ մեր Տերը նույնիսկ Իր գերեզմանը չունի և թաղվեց Հովսեփ Արիմաթացու գերեզմանում:

Իսկ այն հարյուրավոր ծաղիկների և մեծարժեք պսակների գինը, որ ավելի շատ ցուցամոլության համար է արվում, քան անհրաժեշտության, ինչքա՛ն կթեթևացներ հողարկավորության մնացած հոգսերը, քան թե շիրմաթմբի վրա կիտեն, հետո էլ վերջում կոթերը ջարդեն, որպեսզի չհավաքեն տանեն վերավաճառելու, [ահա թե ուր ենք հասել մեր սնոտի ավելորդապաշտություններով]:

Իսկ առավել գերադասելի չէ՞ր անցեցյալի հոգու փրկության համար դրանց գումարից բաժին հանվեր աղքատներին ու կարիքավորներին, որ Տիրոջ իշխանավորներն են, քանզի

նրանց օրհնանքը մինչև Աստծո մոտ է հասնում: Այդ թշվառացած արարածները երբ որևէ մեկից, ողորմություն են ստանում, հաճախ են օրհնում ասելով. «Աստված ողորմի անցավորներին»:

Իսկ ինչ մնում է ուղեկցող փողային նվագախմբի երաժշտությանը, ապա դա սոցիալիստական տգեղ սովորություն է, որ ամեն բան աղմուկի կեղծ պաթոսով են արել, իսկ հոգու համար երբ ամեն բան արդեն եթերային է ու մեղմ, այդ անճաշակ աղմուկը միայն անհանգստություն և վախ կարող է առաջացնել:

### ՄԱՀՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ըստ քրիստոնեական թաղման ծիսակարգի, անցեցյալին իր տանից սկսած մինչև գերեզմանափոսը պետք է ուղեկցի հոգեպարար շարականներն ու հոգեշահ աղոթքները, որ ինչպես արդեն ասացինք կատարվում է միայն Տիրոջ քահանաների միջոցով: Ու քանի դեռ անցեցյալը տանն է, կարելի է հոգևոր շարականների ու Պատարագի ձայնագրություններ միացնել, որն օգտակար է նաև հավաքվածների համար, որովհետև աշխարհի հոգեմաշ թոճ ու բոհից և աղմուկներից հետո նրանց հոգին էլ խաղաղվում, ու մարդը սկսում է խորհել իր կյանքի և մահվան մասին, այդ պատճառով Աստվածաշունչը ասում է. **«Ավելի լավ է սուգի տուն գնալը, քան թե հրավերքի»:** Չէ ո՞ր մահը բոլորիս է սպասում, ու հոգին այդ պահերին սկսում է ճիշտ արժեքավորել իր ապրած ժամանակը, որովհետև զգում է, որ Արարչի առջև ինքը դեռ պատասխան ունի տալու:

Եվ ինչպես գրում է Ղևոնդ Ալիշանը. «Մտի՛ր մահվան վարժարանը և այնտեղից սովորի՛ր կյանքի դասը: Ու վա՛յ նրան, որ այդպես էլ խոնարհություն չսովորի այդ վարժարանում, մանավանդ դագաղի շեմին»: Իսկ ՚նեղոս Սինայեցի սուրբ հայրը

ավելացնում է. «Այն իմ հոգիս, ինչու՞ ես այդքան անհոգ կյանքիդ հանդես, ինչու՞ ես մտացրիվ անցկացնում սակավ օրերդ, չգիտե՞ս արդյոք, որ ահա ուր որ է կկանչեն քեզ»:

Հաճախ հարց է ծագում մարդկանց մոտ, թե ի՞նչ պետք է ասել հանգուցյալի հարազատների հետ ձեռնվելիս: Երևի թե պատշաճ քրիստոնավայել մաղթանքը հետևյալն է. «Աստված Սուրբ Հոգով մխիթարի», որովհետև միայն Աստծո Հոգին կարող է մխիթարել հարազատին կորցրած սգավորին, քանզի Սուրբ Հոգու անունը կոչվում է նաև Մխիթարիչ:

### ՀՈԳԵՀԱՑ ԹԵ՝ ԽՐԱԽԾԱՆՔ

Իսկ հոգեհանգստի համար տրվող հացը պետք չէ ուտել խմելու, կամ քեֆի առիթ դարձնել, սեղանները լցնելով քիմքին ու ստամոքսին հաճելի նրբաճաշակ խորտիկներով ու զանազան թանկարժեք ուտեստեղենով ու մանավանդ ոգելից խմիչքներով, որ միայն հարսանիքի ուրախությանը կվայելեր: Ծատերս ենք ականատես եղել, թե ինչպես են հոգեհանգստի տխուր առիթը օդու ազդեցության տակ, կատակի կամ կովի վերածվել, ու դեռ այսքանից հետո ուզում ենք մխիթարվել մեր արարքներով: Բավական համարենք այն մի բաժակ գինին [ոչ թե օղին, ու ոչ թե լցնելով շիրմաթմբին] և մի կտոր հացը, որ ճաշակվում է գերեզմանում՝ շիրմաթմբի մոտ, իսկ մխիթարության խոսքերը, կամ այսպես ասած՝ „կենդանի կենացները,, անպայման չէ համեղ կերակրատեսակների ու սառը օդու բաժակների ուղեկցությամբ, կամ ազդեցությամբ լինեն, այլ պարզ արտից բխած, հարազատի ձեռքը սեղմելիս, կամ էլ տանը, մոտիկների շրջապատում:

Իսկ հետո վայրերից եկածներին իհարկե հարգիր ու պատվիր ու կերակրիր, քանզի նրանք հարգելով քո հարազատին այդքան երկար ճամփա են կտրել եկել: Դրանից ավելին այս դա-

րի ու վայրենաբարո, ոչ քրիստոնավայել դաստիարակության հետևանք է, երբ հարազատները նույնիսկ ծանր պարտքերի տակ են մտել հողարկավորության շքեղությունը ապահովելու համար, կամ էլ շատերս ենք ականատես եղել, թե ինչպես մոտիկ բարեկամներից մեկը նստած ցուցակագրում է թե ով ի՞նչ և ինչքա՞ն բերեց, որպեսզի ըստ դրա պատասխան տան հետո...

Եվ բնականաբար այդ բոլորին զուգահեռ, գերեզմանաքարերը քանի գնացին դարձան ավելի շքեղ, թանկարժեք ու առանց սուրբ Խաչի նշանի, քանզի մարդկանց սրտերից վերացել է փրկության հույսը, բայց չէ՞ որ Հիսուս թարգմանվում է Փրկիչ, քանզի Նրա միջոցով մարդը փրկվում է հավիտենական մահվանից: Ե՞րբ պետք է ազատվենք անհավատությամբ հոգին դառնացնող այս ախտերից, չգիտեմ, բայց համարձակ ու Աստծո խոսքին հավատարիմ մարդիկ պետք է կարողանան հողարկավորության հավաքված ժողովրդին օրինակ հանդիսանան, արմատախիլ անելու արդեն ոսկրացած այս դատը ու սնոտի ավելորդապաշտ սովորությունները:

Եվ փառք Աստծուն, որ վերջին տարիներին նորից վերականգնվում է գրանիտե կամ մարմարյա մեծագին ու սառը շիրմաքարերի փոխարեն, պարզ ու հոգուն հարազատ խաչքարեր կանգնեցնելը, որը Հիսուսին պատկանելու առաջին նշանն է:

### Ն.Ն.ՋԵՑՅԱԼՆԵՐԻ ԹԱՂՄԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ

Իսկ բուն թաղման արարողության վերաբերյալ ասենք, որ ըստ եկեղեցական ծիսակարգի, թաղման օրը կանանց թույլ չի տրվել մինչև շիրմափոսը հասնել, այլ մինչև «հանգստյան քարը», որտեղ վերջին անգամ հրաժեշտ են տվել ննջեցյալին, որից հետո միայն տղամարդիկ են տարել քահանայի հետ միասին: Ու չզարմանանք, որովհետև հնում, կանանց նույնիսկ

արգելել են մկրտության ժամանակ ներկա գտնվել եկեղեցում: Այս օրենքի արմատները չգիտեմ որ դարից է գալիս, բայց հաճախ է լինում որ վերջին պահին կանաչ իրենց անգուսպ ողբ ու լացով իսկապես ավելորդ ցավ են ավելացրել թե՛ իրենց և թե՛ հուղարկավորողների սրտերին: Այդ պատճառով կանաչ մյուս օրն են գնացել գերեզմանները, ու այդ այցելությունը կոչվել է «Էգնահող», որի արմատը էգ բառն է, որ նշանակում է կին, բայց ժողովուրդը չիմանալով այդ բառի իմաստը այն անվանում է «ի նքնահող», որը անհասկանալի է:

Այս խորհուրդը նույնպես ավետարանական է, որովհետև Հիսուսի թաղման օրը կանանց թույլ չտվեցին գերեզման մտնել, [քանզի հրեական գերեզմանները լայն փորվածք է կրաքարային ժայռի մեջ, ուր կարող էին մտնել ու ելնել], այլ նրանք հեռվից տեսան, թե որտեղ դրվեց Տիրոջ մարմինը, իսկ հարության օրը, վերցնելով օծման անուշահոտ յուղերը, կանաչ այցելեցին Հիսուսի գերեզմանին:

Ըստ հին և ընդունված քրիստոնեական կարգի գնում են գերեզմանները նաև յոթերորդ օրը, որ կոչվել են «յոթնօրեք», որ խորհրդանշում է Սուրբ Հոգու յոթ շնորհները, եկեղեցու յոթ խորհուրդները, քրիստոնյաների յոթ առաքինությունները, յոթ մահացու մեղքերը, յոթ զգայարանները, որոնցով մեղանջում ենք և վերջապես ըստ Սուրբ Գրքի ասվում է, որ յոթերորդ օրը սուրբ է և հանգստի օր, որը այստեղ խորհրդանշվում է որպես հոգու հավիտենական հանգիստ Աստծո արքայությունում:

Իսկ քառասուններորդ օրվա համարը որ կոչում ենք «քառասունք», խորհրդանշում է հարությունից հետո Հիսուսի քառասուն օր երկրի վրա գտնվելը, հետո համբարձումը Իր Հոր մոտ: Նաև քառասուն օրվա հետ կապված է Աստվածաշնչային շատ միջադեպեր, ինչպիսիք են Նոյի օրերում քառասուն օր, քառասուն գիշեր անձրև տեղալը և երկրի վրա ամեն շնչավոր արարածի ոչնչացվելը, հրեաների անապատում քառասուն

տարվա պտովելը, Մովսես մարգարեի Սինա լեռան վրա Աստծո հետ քառասուն օրվա մնալը, որից հետո տաս պատվիրանները տրվեց մարդկությանը, և վերջապես Հիսուսի քառասուն օր, քառասուն գիշեր ծոմապահությունը, երբ մեր փրկության համար ոչ կերավ, ոչ խմեց ու սատանայի փորձության դեմ առաջին հաղթանակը տարավ:

Եվ քառասուններորդ օրը, երկնքում տվյալ հոգու համար արդեն ամեն բան պարզ է դառնում և նա իմանում իր լինելիք տեղը մինչև Աստծո դատաստանը, այդ պատճառով այդ քառասուն օրերի ընթացքում անհրաժեշտ է մեր անդադար աղոթքներում հիշել նրան, ողորմություն բաժանել նրա անունով և նրա համար հոգեհանգստյան կարգ պատվիրել եկեղեցում, որը կատարվում է յուրաքանչյուր պատարագից անմիջապես հետո:

#### ՆՈՐԻՑ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր ազգի քրիստոնեական սովորություններից է նաև, անչեցյալին հիշել իր մահվան տարելիցին: Այդ ժամանակ նրա հոգու համար օգտակար է քահանա հրավիրել գերեզման և աղոթքներով խնկարկել շիրմաթումբը, քանի որ այդտեղից է լինելու նրա հարությունը, երբ գա բոլոր մեռելների հարության օրը: Անշուշտ այս խոսքերը շատ ընթերցողների համար հեքիաթ է թվում, բայց չէ՞ որ մեր նախահայր Ադամը նույնպես հողից արարվեց, ու նույն Արարիչը մի՞թե չի կարող այդ հողից նորից մեզ կյանքի կոչել, մանավանդ որ Հիսուս Քրիստոսից անսուտն խոստում ունենք, որ ասվեց ի յուր ամենքիս. *«Ինչո՞ւ եք զարմանում, որովհետև պիտի գա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Նրա, [Աստծո Որդու] ձայնը և դուրս կգան. ովքեր բարի գործեր են գործել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաս-*



տանի հարության համար»: [Հովհ. 5.15]:

Իսկ Պողոս առաքյալն ավելացնում է. «Եթե քարոզվում է թե Քրիստոս մեռելներից հարություն է առել, ինչպե՞ս են ձեզանից ոմանք ասում, թե մեռելներից հարություն չկա: Եթե մեռելներից հարություն չկա, ապա Քրիստոսը հարություն չի առել: Իսկ եթե Քրիստոսը հարություն չի առել, զուր է մեր քարոզությունը և զուր է ձեր հավատը: Եվ մենք Աստծո սուտ վկաները եղած կլինենք, քանի որ Աստծո մասին վկայեցինք, հարություն տվեց Քրիստոսին: ...Եթե Քրիստոսը հարություն չի առել՝ ունայն է ձեր հավատքը և դեռ ձեր մեղքերի մեջ եք: ...Եթե միայն այս կյանքի համար ենք հույս դրել Քրիստոսի վրա, ավելի ողորմելի ենք քան բոլոր մարդիկ: ...Եթե մեռելները հարություն չեն առնում. «ուտենք, խմենք, քանզի վաղը մեռնելու ենք»:

Բայց եթե մեկը ասի, թե ինչպես են հարություն առնում մեռելները, կամ ինչ մարմնով պիտի գան: Անմի՛տ, ինչ որ դու սերմանում ես չի կենդանանա, եթե չմեռնի: Ինչ որ սերմանում ես, սերմանվածը այն նույն մարմինը չէ, որ ծնվելու է, այլ մերկ հատիկ՝ լինի ցորենի, թե այլ սերմերի: Եվ Աստված նրան մարմին է տալիս, ինչպես որ կամենում է. և սերմերից յուրաքանչյուրին՝ իր մարմինը: Ամեն մարմին, նույն մարմինը չէ. այլ է մարմինը մարդկանց և այլ է մարմինը անասունների, այլ է մարմինը թռչունների, և այլ է մարմինը ձկների: Կան նաև երկնավոր մարմիններ, կան նաև երկրավոր մարմիններ...

Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմանվում է ապականոթյասը և հարություն է առնում առանց ապականոթյան, սերմանվում է անարգությանը և հարություն է առնում փառքով, սերմանվում է տկարությանը և հարություն է առնում զորությանը, սերմանվում է շնչավոր մարմին և հարություն է առնում հոգևոր մարմին» [Ա.Կորնթ.15.12-44]:

Իսկ Հովհաննես Մաշկեվորցի վարդապետը այդ բացատ-

րում է այսպես. «Մեր մարմիններից ոչ մի մասնիկ չի կորչում, որքան էլ դրանք փթեն, կամ այրվեն, քանզի դրանք փոխադրվում են այնտեղ, որտեղից երբեմնի վերցվել է Ամենակարողի Ձեռքով»:

Նաև տեղեկացնենք, որ ըստ Աստվածաշնչի աշխարհի արարումից մինչ այսօր, մարմնով երկրից երկինք են տեղափոխվել ընդամենը երեք հոգի, մինչ օրենքի ժամանակներում՝ Ենոքը, օրենքի շրջանում՝ Եղիամ, իսկ օրենքից հետո, Հիսուսը՝ հարության մարմնով: Իսկ մահկանացուներից միայն Մարիամ Աստվածածնի մարմինն է արժանացել առանց ապականոթյուն տեսնելու՝ գերեզմանից վերափոխվելու դեպի երկինք, քանզի այդ կույսի որովայնը իր մեջ կրեց միայն Սուրբ, միայն Տեր Հիսուս Քրիստոսին:

Ասենք նաև, որ շատ անջեցյալ սրբերի մարմիններ չնայած մահացած վիճակում, բայց և այնպես մնացել են անապական, այսինքն չեն հոտել ու փթել ինչպես սովորաբար լինում է, և երբ բացել են տարիներ հետո նրանց շիրմափոսերը, ապա այնտեղից խիստ անուշահոտ բուրմունք է բարձրացել, որը ամենահայտնի վկայությունն է եղել այդ երանելիների սրբությանը: Քիչ չեն եղել նաև այդպիսի սրբերի մասունքներին հպվող և զանազան անբուժելի հիվանդություններից ապաքինվողները: Եվ դա թող անհավանական չթվա, որովհետև երբ նույնիսկ Պետրոս առաքյալի ստվերը ընկնում էր հիվանդների վրա, կամ էլ նրա թաշկինակը դնում էին դիվահարների վրա՝ նրանք իսկույն առողջանում էին, էլ չէն ասում Հիսուսի Խաչի գյուտի մասին, երբ գտնված երեք խաչերից չգիտեին որն է պատկանում Տիրոջը, այդ ժամանակ մի մեռած պատանի էին տանում, և երբ նրան հերթով դրեցին խաչափայտերի վրա, Հիսուսի Խաչին հպվելուց անմիջապես հետո նա կենդանանում է:

Վերջաբանում ավելացնենք, որ ըստ մեր առաքելական եկեղեցու կանոնների, տարեկան հինգ անգամ տաղավարաց, [աչխինքն ամենանշանակալից] տոների հաջորդ օրը համար-

վում է «մեռելոց», երբ բոլոր եկեղեցիներում պատարագ է մատուցվում մեռելացիների համար, ու հոգեհանգստյան այդ արարողությունից հետո մարդիկ գնում են իրենց հանգուցյալների գերեզմաններին այցելության, որտեղ խնկարկություն է արվում և աղոթքներ մատուցվում:

Իհարկե այդ բոլորը առաջ կատարվել է քահանաների կողմից, բայց դժբախտաբար այժմ քահանաները սակավ են, իսկ մեռելացիները բազում:

Եվս մի սխալ սովորություն է արմատացել մեր ժողովրդի մեջ, երբ Սուրբ Զատիկի, կամ Սուրբ Խաչի օրը [որ սխալմամբ կոչում են «բխեչ»], նորոգ հանգուցյալի գերեզմանն են այցելում, փոխանակ ողջերի Սուրբ պատարագին մասնակցելու: Այդպես պետք չէ անել, որովհետև ասացիք որ մեռելացիների համար եկեղեցին հատուկ արարողությամբ հաջորդ օրը նշում է նրանց հիշատակը և այն կոչում են. «Հոգեհանգիստ վասն համօրեն մեռելացի», կամ «Հիշատակ մեռելոց»:

Իսկ մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տաղավարաց տոները հետևյալն են.

1. Հիսուսի ծնունդը- հունվարի 6-ին [անշարժ տոն],
2. + Զատիկ, կամ հարություն Տեառն - մարտ, ապրիլ, մայիս ամիսներին,
3. Վարդավառ -հուլիս ամսվա առաջին կիրակին,
4. Վերափոխումն Սուրբ Աստվածածնի [Խաղողօրհներ]- օգոստոսի 15-ին մոտ կիրակին,
5. Խաչվերաց. [Սուրբ Խաչ] - սեպտեմբերի 14-ին մոտ կիրակին:

Իսկ վերջում, այս բոլորից հետո օգոստոսի է կարդալ մեր սուրբ հայրերի խրատները վշտի և մահվան մասին, քանզի նրանք չվախեցան մահից ու հավատքով պատերազմելով բարի պատերազմը, արժանացան Հիսուս Բրիստոսի խոստացած անմահության պսակին.

❖ *Հոգին ու մարմինը հյուրեր են, մեկը երկնային, մյուսը երկրային:*

[Բարսեղ Մեծ]

❖ *Չպիտակաց արագահոս է մեր կյանքը, բայց նրանում են ձեռք բերում հավիտենական կյանքը:*

[Եփրեմ Ասորի]

❖ *Ինչպես որ անհնար է մարդը մահվան համը չստանի, նույնպես էլ անհնար է որ առանց վշտերի ապրի:*

❖ *Չկա մեկը, որ թե այստեղ՝ այս աշխարհում, թե այնտեղ՝ այն աշխարհում, լինի ուրախության մեջ:*

❖ *Մահը ոչ այլ ինչ է, քան երկարատև քուն:*

[Հովհաննես Ոսկեբերան]

❖ *Չկա մի ակնթարթ, որ չկարողանա վերջինը լինել մեր կյանքի համար: Միգուցե մեզանից ոմանք, որ այս տողերը կարդացին, չտեսնեն վաղվա օրը:*

❖ *Չիմանալով որտեղ և երբ է մեզ սպասում մահը, սպասենք այն ամեն ժամանակ և ամեն տեղ:*

[Սուրբ Օգոստինոս]

❖ *Երբ բաժանվես մարմնիցդ, այդ ժամանակ կախոսաս, որ այդքան հոգս ես արել այնպիսի բաների մասին, որոնք քեզ ոչ մի օգուտ չեն տվել:*

[Հայր Եսայի]

❖ *Մոտալուտ մահվան սպասողը շատ մեղքերի մեջ չի ընկնի:*

[Հայր Եղիսե]

❖ *Ով ապրում է այն մտքով, որ ինքը հավետ պիտի ապրի,*

մահվանից չի՛ վախենա:

[Իսահակ Աստրի]

❖ *Սա՛ էլ է Աստծո ողորմությունը, որ մարդը չգիտի, թե երբ պետք է մեռնի: Ուրեմն քանի որ վերջին օրը անհայտ է, ապա ուշադիր լինենք ամեն օրվա համար:*

[Հովհաննես Մաշկեվորցի]

❖ *Քրիստոս մեռավ և մահվամբ մահը մեռցրեց և մեզ կենդանացրեց, քանզի մահվան համար Նա մահ եղավ, իսկ մեռյալներին համար՝ կենդանություն:*

❖ *Մահը մուտք է դեպի հավիտենականություն, որը լինելու է երկուսը՝ կամ հավիտենական երջանկություն, կամ հավիտենական տանջանքներ:*

[Գրիգոր Տաթևացի]

❖ *Ինչպես սատանան տեսնելով, որ մարդու կյանքի վերջն է մոտենում և ամեն ջանք գործադրում է, որ նրան կորցնի, այդպես էլ Աստված մահվանից առաջ յուրահատուկ մի միջոց է ուղարկում նրա փրկության համար:*

[Անանուն հեղինակ]

Իսկ վերջում զետեղում ենք մի աղոթք ընդհանուր անջեցյալների, մանավանդ՝ հարազատների ու երախտավորների համար, որը անհրաժեշտ է կատարել ամեն շաբաթ երեկո և բոլոր մեռելոց օրերին.

- Աղաչում և խնդրում եմ Քեզանից, ով բազմագույն Աստված, մեր ազգի հին ու նոր և բոլոր հավատքով ու հույսով ի Քեզ անջածների համար: Եվ մանավանդ՝ իմ մարմնավոր և հոգևոր ծնողների, եղբայրների, քույրերի, ազգականների, սիրելիների և բարեկամների համար, նաև հոգևոր վարդապետների,

բարի գործերի մեջ կրթողների և ուսուցիչների և մեր բոլոր ի Քեզ անջած աշխատավորների ու երախտավորների համար, որոնց հիշի՛ր Քո ողորմությամբ գալստյանդ մեծ Օրը, թողություն շնորհի՛ր նրանց բոլոր մեղքերին ու սխալներին և դասի՛ր Քո սուրբերի հետ աջակողմյան դասում և տու՛ր լսել Քո երանավետ բարբառը, թե՛ եկե՛ք, Իմ Հոր օրհնյալներ: Եվ ըստ նրանց՝ մեր հանդեպ երախտիքների, մեկի դիմաց բյուրապատիկ հատուցիր նրանց հոգիներին և անդատապարտ դարձրու մեզ նրանց պարտքից:

Եվ Քեզ փա՛ռք հավիտյան հավիտենից. ամեն:

Ահա հնարավորին չափ ընթերցողին հասցվեց վշտացյալների, սգավորների և անջեցյալների համար անհրաժեշտ տեղեկություններ և խրատներ, քաղված սուրբ եկեղեցու և նրա հավատարիմ ծառաների խորհուրդներից ու խոսքերից: Մնում է հուսալ, որ Հայորդիները թե իրենց հարազատների և թե սեփական հոգիների փրկության համար հավատով ու երկյուղով կկիրառեն դրանք, փառավորելով մեր մարդասեր Աստծուն՝ Հիսուս Քրիստոսի անունով. ամեն:

